ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 նոյեմբերի 2014 թ. **N 92-Ա**

ԳՈՀԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՍԻՍԻԱՆԻ N 5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2014թ. նոյեմբերի 17-ի N 90-Ա կարգադրության, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2014թ նոյեմբերի 19-ից «Սիսիանի N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն դպրոցի ուսուցչուհի Գոհար Հայրապետյանին:

Հիմք՝ Գ. Հայրապետյանի անձնական դիմումը:

2.Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Կոզմանով Կառլեն	Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հարությունյան Հայկ	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
Հարությունյան Գալյա	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ
Հայրապետյան Գոհար	«Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող)
Ալեքսանյան Հովիկ	«Սիսիանի N 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող):

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին, ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2014թ. նոյեմբերի 18
ք. Կապան